նայոյց է լինում, որ իւրաքանչիւր դպրոցին կից պէտք է լինի եւ մի արհեստանոց։ Եթէ աղջկանց դաստիարակութեան մէջ մեռագործութիւնը անհրաժեշտ հարկաւոր է համարվում, որքան առաւել հարկաւոր պիտի համարուի տղայոց մի որ եւ իցէ արհեստ իմանալը. Եւ այս ոչ միայն տնտեսական եւ մարմնամարզական կէտից նայելով մեծ օգտաւէտութիւն ունի, այլ նաեւ մտաւոր եւ հոգեկան զարգացման մեծ օգնութիւն եւ դիւրութիւն է տալիս, վասն զի մարդս մի միայն մտածելու չէ ընդունակ, այլ նաեւ երեւակայելու եւ գործելու։ Գործելը մի միայն գրելը չէ, եւ կարդալը, որ մտածելու հետ սերտ եւ անբաժան կապակցութիւն ունին, այլ այնպիսի գործ, որ հանգստութիւն է տալիս այդ զբաղմունքներին եւ ժամանակ է տալիս նոցա շունչ քաշելու եւ զօրանալու։ Արհեստները կարող են շատ հասարակներից լինել, ինչպէս են կօշկակարութիւնը (ի հարկէ աւելի կատարելագործեալ ձեւով), դերձակութիւն, հիւսնութիւն, երկաթագործութիւն, կազմարարութիւն եւ այլ այսպիսիք։ Մենք մեր դաստիարակութեան կերպը մեր ազգի վիճակին պիտի յարմարացնենք. ինչ հարկաւորութիւն կայ կուրօրեն հետիւել օտար ազգաց։ Ո՞ր բանիմաց մարդը չի կարող նախագուշակել, որ եթէ մեր դպրոցների ընթացքը այսպէս յառաջ երթայ ինչպէս այժմ, մեր մէջ կը շատանայ հետզհետէ ծրիապէս լաւ ուսել եւ լաւ հագնուիլ սիրողներու թիւը. եւ մենք ազգօգուտ անդամների տեղ կստանանք դատարկաշրջիկ եւ դատարկաբան անձինք։ Թող ոչ ոք միակողմանի չմեկնէ մեր այս ակնարկութիւնը եւ գայթակղի, այլ խոստովանի թէ ճշմարիտ է, որ մեր մէջ այսօրուան օրս անգամ շատացել են արդէն այնպիսի պատանիք, որոնք ըստ երեւութին ուսումնածարաւ են, բայց իսկապէս ծոյլ, անզօր եւ ապրելու հեշտ ճանապարհ փնտրող անձինք։ Մեր նախնիք իրանց անանշան ուսումովը մեծամեծ հարստութիւններ էին դիզում. բայց մենք այժմ պատրաստումենք այնպիսի անձինք, որոնք վատնելու առաւել ընդունակ են, քան թէ շահելու իրանց հայրական ժառանգութիւնը։ Պէտք է երեւակայել, որ ծխական դպրոցի պատրաստական դասատանից մինչեւ համալսարանի չորրորդ եւ հինգերորդ կուրսը մի այնպիսի ժամանակամիջոց է, որ պարունակում է իւր մէջ միջին թուով քսան տարի, իսկ քսան տարուայ ծախքը անում է շատ սակաւիկ տասը հազար մանէթ։ Հարկաւոր է այս բոլորը աչքի առջեւ ունենալ եւ մեր զաւակներին նախապատրաստել այնպէս, որ կարողանան առանց յոգնելու, առանց մեծամեծ կորստի, այնքան բան ձեռք բերել, որ կարողանան նորանից ազգին էլ մասն հանել. իսկ միակ մի դլուխ ապահովացնելու նպատակով բառասուն տարուան հասցնել իւր կրթութեան շրջանը, այդ մի սարսափելի մոլորութիւն է։

(Շարունակելի)

Ղ. Աղ.

—

ՈՐԴԻՈՆ

ԱՌ ՄԱՅՐՆ ԱՅՐԻ

Մի անյոյս ո՜հ, մայր, երբէք վրհատիր,
Մի քոյդ դառն օրեր, անվերջ համարիր.
Այո՛ երկինք հաշտ, արդ մեզ կակնարկեն,
Աստուծոյ գութը եւ սէր կաւետեն։

Փութա՛ անձկալի մեր մայր սիրական,
Հետեւիր որդւոյդ լուսաւորութեան.
Քոյդ միակ նըպատակ, դլխաւոր ջանք, ճիդ,
Մըտաց զարդացման թող հոգան կարիք։

Քաղցրիկ դիտութիւնք զանազան ուսմանց
Ժամանակի պէտք, փառք են պարծանաց.
Ուր սոցին ճաշակ ոչ տայ ախորժակ,
Անդ ոսոխին ճանկը կանգնեն յաղթանակ։

Ապա յորդոր տուր մեզ, Մայր սիրական.
Թող փութալ տաճար չքնաղ կրթութեան . . .
Քաղել ընտանի, կարեւոր սերմեր,
Ապագային տալ արդիւնք բազմաբեր։

Դիտացիր, յայնժամ, սէր մեր Մայր այրի,
Փոխանակ սրգոյ, վրշտացդ բազմազգի
Յաջորդեն աւուրք, աւուրք երջանիկ,
Պերճ փառօք յաւէտ, եւ յոյժ բերկրալիք։

ԱՅՐԻ ՄԱՅՐՆ ԱՌ ՈՐԴԻՈՆ։

Զեզ եւ եթ իմ յոյս վերջին ապաստան,
Որդիք անձկալիք, սրտիս ըսփոփանք.
Զեզ այքերս ուղղած, խանդակաթ մընամ,
Օ՜ն, յեռանդ, կայտառ, «Տէր ընդ ձեզ» կարդամ։

Փութացէք հապա, տաճար դիտութեանց,
Անձանձրոյթ ճրգով, լոյս տալ Զեր մըտաց.
Զի զուր բաղձալի ուսմամբք զարդացած,
Զեօք առնու «ոգի», ձեր Մայր այրիացած։

— Ս.

Նախընթաց համարի 18 երեսի երկրորդ էջումը փոխանակ ,,արեւելեան'' սխալմամբ ,,արեւմտեան,, է դրուած։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ